ՎԱՀԱՆ ՌՇՏՈՒՆԻ

Երկարատև հիվանդությունից հետո կյանքից հեռացավ պրոֆ. Վահան Հարությունի Ռշտունին՝ անվանի գիտնականը, սիրված դասախոսն ու հիանալի քաղաքացին։ Նա պատկանում էր հայ մտավորականների այն սերընդին, որոնց գործունեությունը սկզբնավորվեց մեծ Հոկտեմբերի նախօրյակին, բայց ծավալվեց ու զարգացավ սովետական իշխանության տարիներին։

Վ. Հ. Ռշտունին ծնվել է Վաղարշապատում, 1894 թ. փետրվարի 6-ին, Արևմտյան Հայաստանից 1880-ական թթ. գաղթած գյուղացի արհեստավորի ընտանիքում։ Նախնական կրթությունը ստանալով ընտանիքում, 1904 թ. մտնում է Գևորգյան ճեմարան, որտեղ սովորողները ունկնդրում էին այնպիսի քանքարավոր դասախոսների ու գիտնականների, ինչպիսիք էին Մ. Աբեղյանը, Հ. Մանանդյանը, Հ. Աճառյանը և ուրիշներ։

1915 թ. ավարտելով ճեմարանը, երիտասարդ Ռշտունին անցնում է ուսուցչական աշխատանքի՝ սկզբում Թավրիզում, ապա Ախալցխայում և Սուխումում։ 1919 թ. ընդունվում է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի տնտեսագիտական ֆակուլտետը, որը ավարտում է 1924 թ.։ Այնուհետև նա գալիս է Երևան, անցնում դասախոսական աշխատանքի կուսակցական դպրոցում, պետական համալսարանում։ 1931—1932 ուսումնական տարում համալսարանում նա հիմնադրում է ՍՍՀՄ պատմության ամբիոնը և անփոփոխ ղեկավարում այն մինչև իր կյանքի վերջը։ Համալսարանում աշխատած տարիներին նա եղել է համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, ուսումնական մասի վարիչ (պրոռեկտոր), գիտական աշխատանքների սեկցիայի ղեկավար և այլն։ Վ. Հ. Ռշտունին ակտիվորեն մասնակցել է նաև հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին. երկու անգամ ընտրվել է Երևանի քաղաքային սովետի դեպուտատ և բարեխղճորեն կատարե՝ իր պարտականությունները։

Վ. Հ. Ռշտունին ոչ միայն հմուտ մանկավարժ էր, այլև շնորհալի գիտնական։ 1938—1952 թթ. համատեղության կարգով նա աշխատում է սկզբում Արմֆանում, ապա՝ ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում։ 1940 թ. հաջողությամբ պաշտպանում է իր թեկնածուական («Հայ հասարակական-քաղաքական հոսանքները 1861, 1865, 1870 թթ. գյուղացիական ռեֆորմի մասին»), իսկ 1941 թ. Մոսկվայում՝ ՍՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտում՝ դոկտորական դիսերտացիան («Գյուղացիական ռեֆորմը Հայաստանում 1870 թ.»)։ 1943 թ. ստանում է պրոֆեսորի կոչում, իսկ 1956 թ. ընտրվում Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ։



Պրոֆ. Վ. Հ. Ռշտունին գրել է մի քանի տասնյակ գիտական հետազոտություններ և մարքս-լենինյան մեթոդոլոգիայով լուսաբանել Արևելյան Հայաստանի XIX—XX դդ. պատմության սոցիալ-տնտեսական բազմաթիվ կնճռոտ հարցեր։ Նա առաջինը ուսումնասիրեց 1870 թ. գյուղացիական ռեֆորմը Հայաստանում, հողային հարաբերությունները և գյուղացիական շարժումները նախասովետական Հայաստանում և այդ մասին հրատարակեց արխիվային արժեքավոր փաստաթղթեր։ Նրա մի շարք մենագրությունները («Գյուղացիական ռեֆորմը Հայաստանում 1870 թ.», «Գյուղացիական շարժումները Հայաստանում XIX դարում», «Ցարիզմի ագրարային քաղաքականությունը և գյուղացիական շարժումները Հայաստանում XX դարի սկզբին», «Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, 1828—1957 թթ.», հատ. I և II) իրենց պատվավոր տեղը գրավեցին սովետահայ պատմագիտության մեջ։ Նա արժեքավոր աշխատություններ է գրել նաև արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքների մասին և դրանց մեծ մասը ամփոփել իր «Հայ հասարակական հոսանքների պատ-

մությունից (XIX դարի երկրորդ կես, ետռեֆորմյան շրջան)» ծավալուն աշխատության մեջ։

Պրոֆ. Վ. Հ. Ռշտունին զբաղվել է նաև Անդրկովկասի պատմությամբ, լուսաբանել է ցարիզմի գաղութային քաղաքականությունը պատմական տարբեր շրջաններում, կապիտալիզմի զարգացման խնդիրները և անդրկովկասյան ժողովուրդների համատեղ պայքարը հանուն իրենց սոցիալական ու ազգային ազատագրման։ Նա ակտիվորեն մասնակցել է նաև հայ ժողովրդի պատմության դպրոցական դասագրքերի ու Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կողմից պատրաստվող հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի ստեղծմանը։ Իր գիտական եզրակացությունները նա կատարում էր փաստերն ու երևույթները բարեխղճորեն ուսումնասիրելուց հետո և հետևողականորեն պաշտպանում դրանք։

Պրոֆ. Ռշտունին թարգմանել է Վ. Ի. Լենինի մի շարք աշխատություններ և պրոպագանդել հայ ընթերցող հասարակության մեջ։

Վաստակաշատ գիտնականը մեծ ծառայություն ունի պատմաբան կադրերի պատրաստման և աճեցման գործում։ Նա ղեկավարել է տասնյակ ասպիրանտների, որոնք, պաշտպանելով թեկնածուական ու դոկտորական դիսերտացիաներ, հաջողությամբ աշխատում են հանրապետության զանազան բուհերում ու գիտական հաստատություններում։ Նա վերին աստիճանի ուշադիր էր իր սաների նկատմամբ, հոդատարությունը զուգակցում էր պահանջկոտությանը և իր ազնվությամբ ու անաչառությամբ վայելում մեծ հարգանք ու հեղինակություն։

Կոմունիստական կուսակցությունը, սովետական կառավարությունը բարձր են գնահատել պրոֆ. Վ. Հ. Ռշտունու ծառայությունները։ 1946 թ. նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում, նույն թվականին նա պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար» և «Աշխատանքային արիության համար» մեդալներով, իսկ 1953 թ.՝ Լենինի շքանշանով։

Անվանի գիտնականը անգամ հիվանդության ժամանակ շարունակում էր իր աշխատանքները։ Նա ուզում էր դրել «Ուրվագծերի» երրորդ և «Հասարակական հոսանքների» երկրորդ հատորները ու այդպիսով ամբողջացնել իր հետազոտությունները։

Ա. ՀԱՄԲԱՐՅԱՆ